



Մամուլի հաղորդագրություն
20.09.2018 թ.

Տիգրան Համասյանի լուսանջելեսյան ելույթի հասույթի մի մասը՝ ՔՈԱՖ-ին

Հռչակավոր դաշնակահար և երգահան **Տիգրան Համասյանը** հոկտեմբերի 14-ին ելույթ է ունենալու Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանում (UCLA):

Կատարողական արվեստի կենտրոնում (CAP) կայանալիք համերգի խորագիրն է «Ձոն Գյումրուն»: Սա երաժշտական ինպրովիզացիայի վարպետի վերջին ալբոմի վերնագիրն է, ու հենց այս հավաքածուի գործերն են հնչելու սրահում:

Համալսարանական սուլո համերգի հասույթի 10 տոկոսն ուղղվելու է Հայաստանի մանուկներ հիմնադրամին (ՔՈԱՖ): ՔՈԱՖ-ի տնօրենների խորհուրդը հոգում է Հիմնադրամի բոլոր վարչական ծախսերը, իսկ բարերարների նվիրատվությունը 100 տոկոսով ուղղվում ու ծառայում է հենց ծրագրերի իրագործմանը:

«Հայաստանի մանուկներ հիմնադրամի առաջատար դերը գյուղական համայնքների զարգացման գործում հատկապես ամրապնդվեց Լոռու մարզում տեխնոլոգիապես նորարար ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի բացմամբ,- ասաց ՔՈԱՖ-ի հիմնադիր և գործադիր տնօրեն, դոկտոր Կարո Արմենը:- Մենք բարձր ենք գնահատում CAP UCLA հետ գործընկերային համաբերությունները՝ հիմնված նույն արժեքների ու առաքելության վրա: Շնորհակալ ենք, որ համերգի հասույթից ՔՈԱՖ-ին նվիրատվություն են անում: Եվ հատկապես շնորհակալ ենք Տիգրան Համասյանին՝ հայրենիքում երեխաների կյանքի որակը բարձրացնելու ուղղությամբ ներդրվող ջանքերի համար»:

Դաշնակահար Տիգրան Համասյանը մշտապես փորձել է Հայաստանում դրական փոփոխություններ բերել իր նվիրումով և միացել է Հայաստանի մանուկներ հիմնադրամին՝ երիտասարդներին քաջալերելու գործում:

Երաժիշտ, կոմպոզիտոր, ծնունդով գյումրեցի Տիգրան Համասյանը հռչակվել է իր սերնդի ամենանշանակալի ու յուրօրինակ ջազա-ռոքային դաշնակահարներից մեկը: Նա աննկարագրելի վարպետությամբ է մերում ջազային ինպրովիզացիան ու ժողովրդական երաժշտությունը:

Բրիտանական «The Guardian» թերթը հիացնում էր հայտնել. «Նա ջազի ամենաթեժ դաշնակահարներից է, սիրում է տարբեր բաներ խառնել միմյանց՝ բիրտի,

թրեշ-մետալ կամ դարսթեփ: Բայց իր սիրտը ժողովրդական մեղեդիների մեջ է՝ հայրենի Հայաստանում»:

* * *

Տիգրան Համասյանը ծնվել է 1987 թվականին Գյումրիում: Դեռ մանուկ հասակից շատ է սիրել երաժշտությունը. երաժշտական գործիքները նրան ավելի էին գերում, քան խաղալիքները: Յոթ տարեկանում ավելի է արտահայտվում նրա սերը ջազի նկատմամբ, իսկ կարևորագույն զբաղմունքներից մեկը դառնում ջազ լսելը:

Հետագայում Տիգրանի ծնողները տեղափոխվում են [Երևան](#), և նա ավելի մեծ հնարավորություն է ունենում երաժշտությամբ լրջորեն զբաղվելու համար: Շուտով սկսում է ստեղծագործել, և տարիքի հետ էլ ավելի է մեծանում նրա սերն ու վարպետությունը:

2006-ին հաղթող է ճանաչվել աշխարհահռչակ Մոնքի անվան միջազգային ջազ մրցույթում (Thelonious Monk International Jazz Competition):

Հայաստանի մանուկներ հիմնադրամը (COAF) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Չիրակի և Տավուշի մարզերի 44 համայնքների քավելի քան 75,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ COAF-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովելու գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՍՄԱՐԹ-ը կդառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում:

Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանի Կատարողական արվեստի կենտրոնը (CAP UCLA) աշխարհի առաջատար արվեստագետների միջոցով խթանում է ժամանակակից կատարողական արվեստի խթանումը բոլոր ուղղությունները՝ պար, երաժշտություն, խոսքի արվեստ ու թատրոն, ինչպես նաև նոր ձևավորվող թվային, համատեղ ու խաչաձև հարթակներ: UCLA-ի արվեստի ու ճարտարապետության դպրոցի մաս կազմող այս կենտրոնը անմիջական հարաբերություններ է հաստատում այն արվեստագետների հետ, ովքեր յուրօրինակ գործեր են հեղինակում: Դա դիմամիկ կրթական միջավայր է ստեղծում և՛ համալսարանի տարածքում, և՛ ողջ համայնքում:

Կազմակերպությունն օժանդակում է ստեղծագործ ծրագրերին՝ արվեստագետներին աջակցելով ֆինանսապես, նրանց փորձարկումների ժամանակ տրամադրելով, մեծացնում է նրանց ռազմավարական կապերն ու համագործակցության հարթակներ է ձևավորում:

CAP UCLA-ն նաև ապահով հանգրվան է, ուր ծաղկում են ապրում մշակութային տարբեր արտահայտչաձևերն ու գեղարվեստական նորարար հետազոտությունները:

* * *

Լուսանկարը՝ Ելենա Համասյանի